

## Աշխատանքի առողջություն և անվտանգություն: Մաքրում

COVID-19-ը տարածվում է շնչառական կաթիլների միջոցով, որոնք արտադրվում են, երբ վարակված անձը հագում է կամ փռոտում: Անձը կարող է վարակվել վիրուսով՝ դիպչելով մակերեսին կամ առարկային, որի վրա կա վիրուսը, և հետո դիպչելով իր բերանին, քթին կամ աչքերին:

Աշխատավայրերը առնվազն ամեն օր պետք է մաքրվեն: Լվացող միջոցներով և ջրով մաքրումը բավարար է:

Դուք պետք է.

- նվազեցնեք մակերեսներին դիպչելը, նշաններ տեղադրեք և աջակցեք ձեր աշխատողներին հիշեցնել հաճախորդներին
- կրճատեք աշխատողների համար դիպչելու կետերի քանակը
- տրամադրեք ձեռքերի լվացման միջոցներ և ձեռքերի ախտահանիչներ մուտքի և ելքի կետերում, եթե հնարավոր է:

### Ինչպես մաքրել և ախտահանել

Մինչև մակերեսի ախտահանումը, կարևոր է, որ սկզբում այն մաքրվի: Ցեխը և կեղտը կարող են նվազեցնել ախտահանիչների ազդեցությունը՝ ոչնչացնելու մանրէները:

Դուք պետք է տրամադրեք ձեր աշխատողներին մաքրելու և ախտահանելու համապատասխան միջոցներ և անձնական պաշտպանիչ սարքավորումներ և ապահովեք, որ նրանք պատրաստված լինեն դրանք օգտագործելու համար:

### Ո՞րն է տարբերությունը մաքրման և ախտահանման միջև

**Մաքրում** նշանակում է ֆիզիկապես հեռացնել բացիլները (մանրէները և վիրուսները), ցեխը և կեղտը մակերեսներից՝ օգտագործելով լվացող նյութեր և ջրային լուծույթներ:

**Ախտահանում** նշանակում է քիմիական նյութերի օգտագործում՝ ոչնչացնելու մանրէները մակերեսներից: Սովորաբար ախտահանիչները անհրաժեշտ են միայն այն դեպքում, եթե մակերեսը հնարավոր է վարակված է վիրուսով:

## Ո՞ր տարածքները պետք է մաքրվեն և ախտահանվեն, և ինչքա՞ն հաճախակի

Ցանկացած մակերեսներ, որոնց հաճախակի դիպչում են, պետք է մաքրել պարբերաբար, ինչպես օրինակ՝ դռների բռնակները, սեղանները, հեռախոսները, EFTPOS-ը և հարմարությունները, ինչպես օրինակ՝ զուգարանները:

Մակերեսները, որոնք տեսանելիորեն կեղտոտ են կամ որոնց վրա հեղուկ է թափված, պետք է հնարավորինս շուտ մաքրել:

Ախտահանում անհրաժեշտ է, եթե կա COVID-19-ի հաստատված կամ կասկածելի դեպք աշխատավայրում: Եթե ձեր աշխատավայր ամեն օր շատ մարդիկ են այցելում, խորհուրդ է տրվում, որ դուք նաև ախտահանեք պարբերաբար:

## Ի՞նչ անել, եթե իմ աշխատավայրում կա COVID-19-ի դեպք

Եթե ձեր աշխատավայրում կա COVID-19-ի դեպք, ձեր նահանգի կամ տարածքի առողջապահության մարմինները՝ [state or territory health authority](#) ձեզ կտեղեկացնեն ինչ անել: Հետևեք նրանց հրահանգներին:

Ձեր աշխատավայրը պետք է մանրակրկիտ մաքրել և ախտահանել նախքան մարդիկ կարող են վերադառնալ աշխատավայր:

## Ի՞նչ կատարեք աշխատողների անձնական իրերի մասին

Դուք պետք է տեղեկացնեք ձեր աշխատողներին պարբերաբար մաքրել անձնական իրերը, որոնք օգտագործվում են աշխատավայրում, ինչպես օրինակ՝ ակնոցները և հեռախոսները, օգտագործելով ախտահանող անձեռոցիկներ:

## Եթե ամենը վաճառված է, կարո՞ղ եմ պատրաստել իմ սեփական ախտահանիչ միջոցը

Խանութից գնված ախտահանիչները համապատասխանում են կառավարության չափանիշներին, այնպես որ, դուք գիտեք, որ դրանք կաշխատեն: Մակայն, դուք կարող եք պատրաստել ախտահանող լուծույթ՝ օգտագործելով սպիտակեցնող նյութ և ջուր:

Օգտագործեք քիմիական նյութերը զգուշորեն, քանի որ դրանք կարող են վտանգավոր լինել:

## **Ի՞նչ պետք է հազնեն իմ աշխատողները մաքրելու համար**

Շատ դեպքերում, անհրաժեշտ չէ, որպեսզի աշխատողները պաշտպանիչ հագուստներ կրեն ձեր աշխատավայրը մաքրելու համար: Որպես ելակետ.

- ձեռնոցները նվազագույն պահանջն են
- վիրահատական դիմակներ պետք է կրել, եթե մաքրում են տարածք, որը վարակված է կասկածելի կամ հաստատված COVID-19-ի դեպքի կողմից
- խալաթներ և մեկանգամյա կոստյումներ անհրաժեշտ չեն
- դուք պետք է տրամադրեք անձնական պաշտպանիչ սարքավորումներ և սովորեցնեք ձեր աշխատողներին ինչպես դրանք անվտանգ օգտագործել:

## **Արդյո՞ք հակամանրէական միջոցը կոչնչացնի COVID-19-ը**

Հակամանրէական միջոցները նախատեսված են մանրէները ոչնչացնելու համար: Սակայն COVID-19-ը առաջանում է վիրուսից, ոչ թե մանրէից, հետևաբար հակամանրէական միջոց անհրաժեշտ չէ:

Ձեռքերը մաքրելու համար՝ սովորական օձառը և տաք ջուրը արդյունավետ են:

## **Լրացուցիչ տեղեկություններ**

COVID-19-ի և աշխատանքի առողջության և անվտանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք Անվտանգ աշխատանք Ավստրալիա կայքը՝ [Safe Work Australia website](https://www.swa.gov.au/coronavirus).